ՆՈՐ ԳՐՔԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

«Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Ամպելոգրաֆիա» *(հատուկ գիտություն խաղողի սորտերի մասին), մեծածավալ գիտական աշխատությունը։ Գիրքը բաղկացած է 7 բաժնից, զետեղված են նաև 60 տեսակ խաղողների սորտերի լուսանկարներ։ Գիրքը հրատարակված է լավ թղթի վրա, շքեղ կազմով։*

Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ.— «Աստղերի էվոլուցիան և աստրոֆիզիկան»։

Ռ. ԿԻՐՅԱՆՈՎ.— «Բյուրեղային նյութի հետազոտման մեթոդիկան բևեռացող միկրոսկոպի օգնությամբ»։ *Գիրքը նկարազարդված է բազմաթիվ գծագրական նկարներով։*

Հ. ՄԱՂԱՔՅԱՆ.— «Անդրկովկասի բարձրալեռնային մարգագետինների զարգացման էտապները»։

ԷԴ. ԱՂԱՅԱՆ.— «Լեզվի ծագումը և զարգացումը», *որը ունի հետևյալ բաժինները.— Լեզվի պատմությունը Մառի ուսմունքը լեզվի մասին, հնչյունական լեզվի առաջացումը, նախադասությունների առաջացումը, բառի առաջացումը, լեզվի զարգացման հիմնական օրինաչափությունները։*

Մ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ.— «Վեց օր», *վիպակ Հայրենական Մեծ Պատերազմի կյանքից (ավագ լեյտենանտ Ղուկաս Մադոյանի և նրա դումարտակի սրխրագործությունները Ռոստովում— 1943 թվին)։*

Հ. ՍՄԲԱՏՅԱՆ.—«Բամբակի բարձր բերքի ագրոտեխնիկայի հիմունքները», *հետևյալ թեմաներով «Բնական պայմանները» (կլիման, հողը, դաշտամոլախոտային բուսականությունը, մշակվող սորտի բնութագրությունը). հետազոտման մեթոդիկան, հողի նախացանքային մշակման կոմպլեքսը, բույսերի խտությունը, բամբակենու ոռոգումը, ծերատումը և այլն։*